ՀՌՉԱԿԱԳԻՐ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄՏԱՎՈՐ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ընդունվել է Գլազգոյում

Գրադարանային միությունների – հաստատությունների միջազգային դաշնությունը (ԻՖԼԱ) հիմնադրման 75-ամյա տարեդարձին նվիրված հանդիպման առիթով հայտարարում է.

ԻՖԼԱ-ն հռչակում է մարդկանց հիմնարար իրավունքը ինչպես տեղեկատվության անարգել ստացման, այնպես էլ նրա տարածման համար:

ԻՖԼԱ-ն – նրա անդամները, որոնք ներկայացնում են աշխարհի գրադարանային հանրությունը, աջակցում, պաշտպանում – զարգացնում են մտավոր ազատությունը՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին համապատասխան: Մտավոր ազատությունը իր մեջ բովանդակում է մարդկային իմացության, կարծիքների, ստեղծագործ մտքի – մտավոր գործունեության հարստությունը:

ԻՖԼԱ-ն հայտարարում է, որ մտավոր ազատության վճռական պաշտպանությունը գրադարանային – տեղեկատվական ծառայության մասնագետների հիմնական պարտականությունն է, որն արտահայտվում է վարվելակերպի վարքականոնում – դրս–որվում գործունեության մեջ:

ԻՖԼԱ-ն հաստատում է, որ.

- Գրադարանները – տեղեկատվական ծառայություններն ապահովում են մուտք դեպի տեղեկատվությունը, գաղափարները – ստեղծագործական եր–ակայությունը ցանկացած միջավայրում – անկախ սահմաններից: Նրանք հանդես են գալիս որպես գիտելիքի, մտածողության – մշակույթի օջախներ, էական աջակցություն առաջարկելով թե անհատներին – թե առանձին խմբերին, անկախ որոշում կայացնելու, մշակութային զարգացման, հետազոտությունների – շարունակական կրթության համար:
- Գրադարանները – տեղեկատվական ծառայությունները պայմաններ են ստեղծում մտավոր ազատության զարգացման ու պահպանման համար – օգնում են պաշտպանելու ժողովրդավարական արժեքները – համընդհանուր քաղաքացիական իրավունքները: Հետ–աբար նրանք պարտավոր են իրենց օգտվողներին տրամադրել մուտք դեպի համապատասխան պաշարներ – ծառայություններ առանց սահմանափակումների – դիմակայելով գրաքննության բոլոր դրս–որումներին:
- Գրադարանները – տեղեկատվական ծառայությունները պետք է ձեռք բերեն, պահպանեն – ապահովեն հասարակության բազմակարծությունը – բազմազանությունը ներկայացնող ամենատարբեր նյութերի մատչելիությունը: Գրադարանային նյութեր ընտրելիս – ծառայություններ մատուցելիս գրադարանները պետք է առաջնորդվեն մասնագիտական մոտեցումներով, այլ ոչ թե քաղաքական, բարոյական կամ կրոնական համոզմունքներով:
- Գրադարանները – տեղեկատվական ծառայությունները բոլոր օգտվողներին պետք է տրամադրեն հավասար հնարավորություն՛ օգտվելու նյութերից, գրադարանային տեխնիկայից – ծառայություններից: Չի թույլատրվում խտրականություն ռասայի, ազգության կամ էթնիկ պատկանելության հատկանիշով, քաղաքական կամ կրոնական համոզմունքների, տարիքի, սեռի կամ սեռական կողմնորոշման, հաշմանդամության – կամ որ–է այլ պատճառով:
- Գրադարանները – տեղեկատվական ծառայությունները պետք է պաշտպանեն յուրաքանչյուր օգտվողի անձնական կյանքի իրավունքը – նրա կողմից պահանջված կամ ստացված տեղեկատվության կամ նրան տրամադրված պաշարների, տեղեկանքի համար օգտագործած, բաժանորդագրությամբ վերցված, ստացված կամ փոխանցված տեղեկությունների գաղտնիությունը:

Այդ նպատակով ԻՖԼԱ-ն գրադարաններին – տեղեկատվական ծառայություններին – նրանց աշխատակիցներին կոչ է անում աջակցել – տարածել մտավոր ազատության սկզբունքները – ապահովել տեղեկատվության անարգել մուտքը:

Սույն հռչակագիրը պատրաստել է IFLA/FAIFE հանձնաժողովը: ԻՖԼԱ-ի վարչությունը հավանություն է տվել 27 մարտի, 2002 Հաագայում, Նիդեռլանդներ: Հաստատվել է ԻՖԼԱ գլխավոր ժողովի կողմից 23 օգոստոսի, 2002, Գլազգո, Շոտլանդիա:

Թարգմ.՝ Ներսես Հայրապետյան